ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
25.02.2025 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
*«ՏԵՐՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»*
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

| | | |
|---|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ՏԵՐՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» |
| 1.2 ՀՎՀՀ-ն | | 02577111 |
| 1.3 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 72 2-ՐԴ ՄԱՍՆ. |
| 1.4 Պետական գրանցման համարը | | 211.171.03189 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2005-01-17 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)43031003 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | narineabelyan@mail.ru |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը | Ազգանունը | Պաշտոնը |
| ԼԻԼԻԹ | ՄԵԼԻՔՅԱՆ | գործադիր տնօրեն |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | |
| Գործող օրենսդրության սահմաններում իր ընտրովի մարմնի միջոցով պետական տնտեսական հասարակական ու քաղաքական մարմիններում ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքներն ու շահերը | | |
| Անհրաժեշտության դեպքում իր անդամներին ցուցաբերել նյութական օգնություն՝իրենց մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով | | |
| Համախմբել ու համակարգել մշակութային գործիչների, գրականագետների,թարգմանիչների, երգահանների ուժերը, փոխադարձ կապեր հաստատել մշակույթի բնագավառում ներհանրապետական ու միջազգային հասարակական, գրական, գեղարվեստական ու գիտամշակութային կազմակերպությունների միջև, մշակել ու իրականացնել նպատակային ծրագրեր, փոխանակել համապատասխան տեղեկատվություն | | |
| Ծավալել հայագիտական , գրական , ազգագրական , հրատարակչական ,գիտահետազոտական և գիտաճանաչողական գործունեություն, նպաստել մշակութային և հոգևոր արժեքների տարածմանը, հայ գրականության ու մշակույթի զարգացմանը, ազգաբնակչության գրական, գեղագիտական դաստիարակությանը,ազգապահպան քաղաքականությանը ինչպեսՀայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախում և Սփյուռքում | | |
| Նպաստել կազմակերպության անդամների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման գործին և աշխատատեղերի ստեղծմանը | | |
| Իրականացնել գյուղատնտեսական և բարեգործական ծրագրեր | | |
| Իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն | | |
| **4 Հասարակական կազմակերպության՝** | | |
| 4.1 Անդամների թիվը | | 6 |
| 4.2 Կամավորների թիվը | | 40 |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | | 2 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Կրթիր կրթողին | ՀՀ, Երևան | Կրթել արհեստագործներին | Ավարտված |
| 2 | Տարազֆեստ | ՀՀ, Երևան | Ազգային արժեքների պահպանություն, ցուցադրություն | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | Կրթիր կրթողին | ՀՀ, Երևան | Ավարտված | Կրթել արհեստագործներին | դրական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Տարազֆեստ | ՀՀ, Երևան | Ավարտված | Ազգային արժեքների պահպանություն, ցուցադրություն | դրական |

| | |
|---|---|
| **8. Տարեկան մուտքեր՝** | |
| 8.1 Դրամական միջոցները | 22,483,800 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 22,483,800 |

| **9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ** | | |
|---|---|---|
| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
| 1 | 2,495,800 | ՀՀ ԿԳՄՍ նախարարություն |
| 2 | 17,935,000 | ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 20,430,800 | |

| **10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝** | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 22,483,800 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 22,483,800 |

| **11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝** | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 20,430,800 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 20,430,800 |

| **12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝** | | | |
|---|---|---|---|
| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
| 1 | Մշակութային ծառայությունների մատուցում | 2,053,000 | Կրթամշակութային ծրագրերի իրականացում |
| Ընդամենը | | 2,053,000 | |
| Նշումներ | | | |
| | | | |

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________3________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ ______________________

ստորագրություն, անունը, ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՌԵՊՈՌՏ ԻՍԱ »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

«REPORT ISA»

LIMITID LIABILITY COMPANY

Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ / ՀԿ անդամ է, ՀԿ խորհրդի 21.11.2024թ-ի Թիվ 93-Ա որոշում/

Ռեեստրում գրանցման համարը Թիվ /1240916/, գրանցման ամսաթիվը՝ 21.11.2024թ,

# Անկախ աուդիտորի եզրակացություն

˝Տերյան Մշակութային կենտրոն˝ ՀԿ

Տնօրեն ՝ Լ. Մելիքյանին

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել ˝Տերյան Մշակութային կենտրոն˝ ՀԿ կազմակերպության այսուհետ «Կազմակերպություն» ֆինանսական հաշվետվությունը, հանրային միջոցների օգտագործման մասով (այսուհետ ֆինանսական հաշվետվություն):

Մեր կարծիքով ˝Տերյան Մշակութային կենտրոն˝ ՀԿ կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցների ֆինանսավորման մասով, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացված 2024թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ՀԿ-ից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք

բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

***Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը***

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթուրումը, երբ այն առկա է: Խեղաթուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական , երբ խելամտորոն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝
-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե ՀԿ-ն ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
-Երբ ֆինանսական հաշվետվությունը պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը
-ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

Տնօրեն, աուդիտի ղեկավար Հայկուշ Կարապետյան
«Ռեպորտ Իսա» ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն,

ք. Երևան Լվովյան 22/24

2025թ. Մայիսի 12

Digitally signed by ABELYAN NARINE 7707830377
Date: 2025.05.29 23:26:24 GMT+04:00

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.05.2025 23:26